

ԲՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ



ԱՍՏՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

ԱՍՏՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ գեղեցիկ ուսմունքը մարդկային գիտութեանց մէջ խիստ բարակներէն ու վսեմներէն մէկն է . վասն զի այնպիսի բաներու վրայ կը խօսի՝ որ Աստուծոյ մեծ վայելչութեանը մէյմէկ նշաններ են , ու լուռ ալ կենալով՝ Աստուծոյ փառքը բարձրաձայն կը պատմեն . ասանկ են երկնային մարմինները , այսինքն արեւը՝ լուսինն ու աստղերը : Այսպիսի հիանալի արարածոց գեղեցկութենէն մարդս այնչափ խաբուեցաւ հին ատենը որ կարծեց թէ անոնք են զինքը ստեղծողը . և չգիտնալով թէ գեռ որչափ վեր է անիկայ աստղերէն՝ զանոնք իբրև արարիչ պաշտեց :

Արնայ ըսել մէկը թէ այսպիսի բարակ ու վսեմ գիտութենէ մը ինչ օգուտ պիտի ըլլայ Ռազմավէպ կարդացողին . միթէ ամէն մարդ աստղաբաշխ պիտի ըլլայ : — Աստղաբաշխ ըլլալու համար աս օրագրիս մէջ եղած տեղեկութիւնները բաւական չեն . ուստի չըլլայ թէ կարդանք նէ՛ ամէնքս ալ մէյմէկ աստղաբաշխ դառնանք ըսելու վախ չկայ . վասն զի մէկ բանի մը վրայ ընդհանուր տեղեկութիւն մը ունենալն ու ան բանը տեղնիտեղը գիտ-

նալն ու բանեցընելը իրարմէ շատ տարբերութիւն ունին : () րինակի համար , մէկը կրնայ տպարան մը մըտնել ու տեսնել հասկընալ թէ գրքերը ինչպէս կը շարուին ու կը տպուին . բայց ինքը ինչուան որ հոն չկենայ ու աղէկ մը չսորվի արուեստին ամէն կտորները , ոչ շարել կը գիտնայ և ոչ տպել . ասանկ է նաև բարակ գիտութեանց տեղեկութիւնը : Ասով կը հասկընանք թէ աստղաբաշխութեան վրայ ընդհանուր տեղեկութիւն մը առնողը՝ առանց աստղաբաշխ ըլլալու կրնայ խելացի ու բան գիտցող մարդ ըլլալ . անկէ զատ՝ մասնաւոր աս մտաւոր օգուտը կը քաղէ որ մտքին մէջէն կ'ելլեն կամաց կամաց ան պառաւական ու ախտարական ծուռ կարծիքները որ ունի արևուն՝ լուսնին ու աստղերուն ազդեցութեանցը վրայ : Այոնցմէ ալ աւելի մեծ օգուտը բարոյականն է , որով՝ ինչպէս ըսինք՝ Աստուծոյ մեծութիւնն ու կարողութիւնը քիչ մը աւելի կը հասկընայ , և իր ոչնչութիւնն ու տկարութիւնը աւելի լաւ կը ճանչնայ :

Լ'սորդաբաշխուած թիւնը :

ՇԱՏ հաւանական պատճառներով յայտնի է՝ թէ աստղաբաշխութիւնը ուրիշ ամէն արտաքին ուսմունքներէն առաջ է, և ատեն ատեն շատ առաջ գնացած . միայն տեսնենք թէ ամենէն առաջ որ ազգին մէջ սկսած է, ու որ ազգերուն մէջ աւելի ծաղկեր է :

Մըսեն արտաքին պատմիչները՝ թէ Վոյ նահապետին որդին Սեմ հնարած է աստղաբաշխական ուսմունքը . մենք որովհետեւ մեր ազգային պատմութենէն գիտենք թէ Սեմ հայաստանի Օ արեւանդ կամ Օ արուանդ գաւառը բնակեցաւ, ուստի կ'ըսենք թէ աստղաբաշխական ուսմունքը նախ հայաստանի մէջ սկսաւ, ինչպէս նաև երկրագործութիւնը :

Յունաց հին պատմիչները, ինչպէս Վիոգորոս սիկիլիացի, Պլինիոս, Ստրաբոն, և ուրիշները, մեր ազգին վրայ շատ տեղեկութիւն չունենալով, կ'ըսեն թէ աստղաբաշխական ուսմունքը նախ Վաղգէացուց մէջ սկսաւ . անոր համար աստղաբաշխութիւնը քաղաքիւն կամ քաղաքիւն ալ կ'ըսուի : Լ'ս խօսքը ճշմարիտ ալ սեպելու ըլլանք նէ, Վաղգէացի ըսելով ինչ ազգ հասկընալու է : Հաւանական պատճառներ կան որ յայտնի կը ցուցնեն թէ հին պատմիչներուն Վալտիզ կամ Վաղգի ըսածը՝ Սև ծովին քովերը կովկասային ազգ մըն էր, ետքը աս ազգէն գաղթական երթալով Ափրատ գետին վարի կողմերը (որ հիմակուան Պաղտատի կողմերը կ'իյնայ), իրենց անունովը Վաղգէացուց աշխարհը սուեցաւ ան տեղուանքը, և հոն տարածեցին աստղաբաշխութեան գիտութիւնը : Լ'րդ աս Վալտիզ կամ Վաղգիք անունը անշուշտ մեր Վաղգի անունն է, որ հայաստանի հիւսիսային գաւառներէն մէկն է՝ Վոզքի սի կամ Վաղգիստանի մօտիկ . ուրեմն Վաղգիք ըսուածներն ալ հայոցմէ

սորված են աստղաբաշխութիւնը, ու ետքը աւելի ծաղկեցուցած են :

Թէպէտ աս պատճառներն ալ չըլլային, կրնար մէկը բնական կերպով ըսել՝ թէ որովհետեւ մարդիկ նախ հայաստանի մէջ բնակեցան, ու երկրագործութեան ետեւէ եղան, հարկաւոր էր որ գիտնային՝ գէթ վեր ՚ի վերանց՝ օդին փոփոխութիւնները, աստղերուն ներգործութիւնը, արեւուն ու լուսնին ազդեցութիւնները, որպէս զի իրենց երկրագործական բաները կարենային կարգաւորել :

Միայն թէ աս ալ յայտնի է՝ որ թէպէտեւ հայաստանի ուշիմ ժողովուրդը այսպիսի սքանչելի գիտութեւ հիմը դրեր է, բայց ուրիշ ազգերը աւելի ծաղկեցուցեր են, ինչպէս են Վաղգէացիք որ շատ տեսակ աստղաբաշխական քննութիւններ ըրին, և Վաղգէոնի աշտարակը որ Վելայ մեհեանն էր՝ աստղաբաշխական գիտարան մը դարձուցած էին կ'ըսեն : Լ'ս աստղաբաշխական գիտութեւ ելան աստղագիտութիւն կամ աշխարհագրագիտութիւն, այսինքն աստղերուն այլևայլ դիրքերէն ու ազդեցութիւններէն սուտումուտ գուշակութիւններ ընելը : Եւ աս մոգութեան արհեստը շատ առաջ գնաց Պարսից մէջ, որ նաև աստղաբաշխութեան ծաղկելուն կերպով մը պատճառ եղան . և արեւուն ու լուսնին գեղեցկութիւնը տեսնելով՝ իբրև Լ'ստուած սկսան պաշտել : Պարսից պէս նաև մեր նախնիքն իրենց կուսպաշտութեան ատենը արև պաշտեցին . վասն զի մարդս իրեն տկար ու ախտաւոր մտքովը քան զարեգակը պայծառ՝ աստուած մը չէր կրնար գտնել արարածոց մէջ : Լ'ս կողմանէ կրնայ ըսուիլ թէ իրենց անխելք կուսպաշտութեանը մէջ ալ աւելի խելացի գտնուած են անոնք՝ քան թէ Ագիպտացիք որ մուկի, կատուի, սուխի, սխտորի երկրպագութիւն ըրին, ու իրենց յաջորդներուն վերջի ան-

1 Միւնիսթիլի :

մտութեան յիշատակ թողուցին :

Վաղդէացւոցմէ ետև աստղաբաշխութիւնը աւելի ծաղկեցրնողները Եգիպտացիք եղան , որ զողիակոսին աստեղատուններուն զատ վատ անուններ դրին , և ուրիշ այլևայլ օգտակար գիւտեր գտան . Ընթեսանդրիայի մէջ ալ աստղաբաշխական դիտարաններ հաստատեցին , և ամէն ազգէ հոն կ'երթային իրենց ուսմունքը կատարելագործելու համար . ինչպէս նաև Հայաստանէն գնացին այլևայլ անձինք՝ Ըթէնքի մէջ իրենց ուսմունքը առաջ տանելէն ետև :

Յունաց մէջ Եգիպտացւոցմէ անցաւ աստղաբաշխութիւնը , որով իմացան լուսնի խաւարման պատճառները , երկրիս կլորութիւնը , ու շատ առաջ տարին աս ուսմունքը . և իրենց դիւցազանց ու քաջերուն անունները անմահ պահելու համար՝ երկրնքի համաստեղութիւններէն շատերը անոնց անուններովը կոչեցին . ինչպէս նաև Հայերը՝ Հայկ նահապետին անունը Որիոն ըսուած երևելի համաստեղութեան վրայ դրին , որով աղէկ կ'իմացուի ազգին ան ատենի ընտիր ախորժակը ու իրենց նախահօրը վրայ ունեցած համարմունքը և սէրը :

Փիւնիկեցիք ալ երևելի էին աստղաբաշխութեան մէջ , և փոքր Ըրջ ըսուած համաստեղութեան վրայի բևեռական աստղը դիտելով՝ վաճառականութիւնը շատ ծաղկեցուցին , ու ծովային ճամբորդութիւնը առջինէն աւելի ապահովցուցին :

Ս երջերը , այսինքն եօթներորդ և ութերորդ դարերուն մէջ , շատ անուանի եղան նաև Ըրաբացիք , և անոնց ձեռքովը տարածուեցաւ աս գիտութիւնս բոլոր Եւրոպա . իսկ հիմա այնչափ առաջ գնացած է՝ որ առջինին հետ բաղդատել չըլլար . և հին ատենը աստղաբաշխութիւնը միայն իմաստունները գիտէին , ինչպէս քուրմերը՝ մոգերը և այլն . իսկ հասարակ

ժողովուրդը ամենեւին տեղեակ չէր , անոր համար ալ լուսնի ու արևու խաւարումը և ուրիշ երկնային երևոյթներ տեսնելուն պէս կը վախնար , չար բանի նշան կարծելով . իսկ հիմա այնչափ ծաղկած է որ այսպիսի բնական երևոյթները հասարակ ժողովուրդեան ալ վախի պատճառ չեն ըլլար :

Ըստղաբաշխութեան գիտութեան վրայ աս ընդհանուր պատմական տեղեկութիւնը տալէն ետև , կարգաւ կը խօսինք անոր այլևայլ մասանցը վրայ :

Հ . Մ . Ս

Վրբ մոլորակ :

Հին ատենի աստղաբաշխները կարծէին թէ մոլորակները եօթը հատ են , արևն ու լուսինն ալ անոնց մէջը սեպելով . և իրաւցընէ պարզ աչքով երևցող մեծ մոլորակները ասոնք են միայն : Ետքը 1781^{ին} Հերշել աստղաբաշխը գտաւ Ուրանոս ըսուած մոլորակը , 1801^{ին} Փիացցին Ղեմարէ մոլորակը , 1802^{ին} ()լպէրսը Պաւլաս մոլորակը , 1804^{ին} Հարտինկը Հերա մոլորակը , 1807^{ին} ()լպէրսը Սեպա մոլորակը . ուստի ինչուան հիմա 11 հատ կը սեպուէին մոլորակները , որ արևէն ունեցած հեռաւորութեանը նայելով՝ ասոնք են իրենց կարգաւ . Փայլածու , Ըրուսեակ , Երկիր , Հրատ , Սեպտա , Հերա , Ղեմարէ , Պաւլաս , Լուսնթագ , Երևակ , Ուրանոս : Ընցած դեկտեմբերի 14^{ին} Հենքէ անունով Պերլինի հռչակաւոր աստղաբաշխը ուրիշ նոր մոլորակ մըն ալ տեսեր է , որ ետքը ուրիշներն ալ ստուգեր են : Ըս մոլորակը իննեւորորդ կարգի աստղերուն մեծութիւնը երևցեր է , ու կէս գիշերէն 2 ժամ ետքը դիրքը աս է եղեր .

Ուղիղ էք . . . 64 աստ . 4 մաս .
Խոտորումն հիւսիս . 12 40